ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐԵՒՆ

ԼՌ. Հ. ԴԱՍՊԱՐՅԱՆ

Անցնելով իշխանության գլուխ, երիտթուրքերը շատ շուտով հրաժարվեցին հպատարության, եղբայրության և ազատության կարգախոսներից, կազմակերպելով և իրականացնելով Կիլիկիայի հայության 1909 թ. կոտորածները։ Դրանով «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամները ցույց տվեցին իրենց ժառանգական կապը սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական ծրագրերի և գործելակերպի հետ։ Կիլիկիահայությանն այնպիսի հարված հասցվեց, որից վերջինս փաստորեն չկարողացավ ոտքի կանգնել։ Երիտթուրքերի կողմից դաժան հետապնդման և հալածանքի էր ենթարկվում ազգային յուրաքանչյուր դրսևորում։ «Կոչնակ» շաբաթաթերթում 1912 թ. փետրվարի 10-ին տպագրված մի հոդվածի համաձայն՝ բռնապետության և զուլումի պայմաններում (բացառությամբ Հաճընի և Զեյթունի) Կիլիկիայում հայերեն լեզուն փաստորեն վերացել էր։ Հոդվածագիրը նշում է, որ հայերեն խոսելու համար Այնթապում կտրել էին մի հայի լեզու։ «Անկե վերջ ո՞ր հայը կարող պիտի ըլլար հայերեն խոսիլ, մանավանդ մեծ քաղաքներուն մեջ, որոնք շրջապատված էին գազան դրացիներով։ Միայն ժայռերուն մեջ իրենց բույն շինող Զեյթունցին և Հաճընցին իրանց գավառաբարբառը կարող եղան պահել»[1]։ Կիլիկիայում կատարած ուսումնասիրություններից հետո դաշնակցական հայտնի գործիչ Ս. Զավարյանը իր կուսակցությանը հանձնած տեղեկագրում գրել է (խոսքը վերաբերում է 1904 թ.). «Ընդարձակ տարածություններու վրա-թրքախոս։ Հայ աղավաղված բարբառը պահած են ուլնիացիք (զեյթունցիները—Ռ. Գ.), հաճընցիք և քեսապցիք։ Մաքուր հայերեն կը խոսի շատ տեղ նոր տերունդը միայն, դպրոցավարտ երիտասարդությունը»[2]։ Արգելվում էր հայկական նոր դպրոցների բացումը, եղածներում աշխատանքի էին նշանակվում թուրք ուսուցիչներ, պարտադրվում էր թուրքերենը՝ որպես թուրքացնելու հիմնական գործոն։ Ավելի էր ուժեղանում հալածանքը հայ եկեղեցու նկատմամբ։ Եվ դա պատահական չէր, քանզի օսմանյան կառավարությունը հայ եկեղեցին իրավամբ դիտում էր որպես հայության գոյապահպանության, հայ լեզվի, պատմության, կրոնի միջոցով հայեցի դաստիարակության և հայապահպանության կարևորագույն լծակ։

Խոսելով հետահամանադրական շրջանում արևմտահայերի նկատմամբ կիրառվող անօրինականությունների, կամայականությունների, տնտեսական, կրոնական, քաղաքական և ազգային ճնշման եղանակների մասին, Կ. Պոլսի հայոց պատրիարքը 1911 թ. փետրվարի 14-ին Բ. Դռանն ու արդարադատության նախարարությանն ուղղված դիմումում ցավով նշում էր. «Սահմանադրական օրենքով չնչված բռնապետական տուրքեր նորեն կը պահանջվին և ավելի հանդգնությամբ հայ կիներու և աղջիկներու պատիվն ու կրոնը կը բռնաբարվին, հանցապարտներու հանդգնությունն ու կառավարության համակերպությունն այն աստիճանի կը հասնի, որ օրորոցեն

---

1 Կոչնակ, 10. II. 1912։

2 Մ. Վարդանյան, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, հ. Ա, Փարիզ, 1932, էջ 462։

նշանված ըլլալու պատրվակով... դատարանին առջևը կհանին հայ աղջիկ մը իսլամացնելու խնդիրը»[3]։

Հրաժարվելով երկիրը դեմոկրատացնելու, ազգային հալածանքը և խտրականությունը վերացնելու սին խոստումներից, իրենց դիրքերն իշխանության բարձունքներում ամրապնդելուց հետո այլևս կարիք չունենալով հպատակ ժողովուրդների աջակցության, երիտթուրքերը մերկացրին իրենց իսկական դեմքը՝ ծայրահեղ ազգայնական քաղաքականություն վարելով։ Սկսվեց բռնությունների և խժդժությունների մի նոր շրջան, բացահայտ կոչ էին անում ընդհարումներ հրահրել և հարվածել հայերին։ Կիլիկիայի Սահակ կաթողիկոսն այդ ժամանակ իսկ հիմքեր տուներ գրելու, թե «հիմարություն է հավատալ տակավին, որ ներքին խռովություններու ատեն տարբեր տարրերու առաջին ջարդարարները անոնք (երիտթուրքերը—Ռ. Գ.) չպիտի ըլլան»[4]։

Արդեն 1911 թ. հոկտեմբերին, սահմանադրության կեղծ գաղափարների հռչակումից երեք տարի անց, երիտթուրքերի՝ Սալոնիկում կայացած համաժողովը որոշում ընդունեց Օսմանյան կայսրության հպատակ ազգերի և ազգությունների նկատմամբ կիրառվելիք քաղաքականության մասին. «Օսմանյան կայսրության բնույթը պետք է լինի մահմեդական. պետք է արտոնություններ ապահովվեն մահմեդական սովորությունների և հիմնարկների համար... Փոքրամասնությունները այնպիսի մեծություններ են, որոնց կարելի է հաշվի չառնել։ Նրանք կարող են պահպանել իրենց կրոնը, բայց ոչ լեզուն։ Թուրքերենի տարածումը լավագույն միջոց է մահմեդականների գերիշխանությունը հաստատելու և մյուս ազգերին ձուլելու համար»[5]։ Սա արդեն պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսության ուղղակի դրսևորում էր. առաջին իսկ միտքը՝ «Օսմանյան կայսրության բնույթը պետք է լինի մահմեդական», նշանակում էր ոչ մահմեդական բոլոր ժողովուրդներին բնաջնջելու կոչ և ապագա գործողությունների ծրագիր էր հանդիսանում։ Ավելի վաղ, 1910 թ. օգոստոսին կայացած՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղտնի նիստում այս գաղափարներն արտահայտվել էին Թալեաթի ելույթում. «Սահմանադրության տրամադրություններով մահմետականներու և քրիստոնյաներու միջև հավասարություն հաստատվեցավ, բայց... այս անիրականալի իտեալ մըն է։ Շերիաթը, մեր անցյալ ամբողջ պատմությունը և հարյուր հազարավոր մահմետականներու զգացումները, և նույնիսկ քրիստոնյաներուն, որոնք համառ կերպով կ՚ընդդիմանան օսմանցիության (ասել է թե՝ թուրքացման—Ռ. Գ.) ամեն փորձի, արգար հավասարության մը հաստատումին դեմ անխորտակելի պատվար մը կը ներկայացնեն։ Ուրեմն, հավասարության ոչ մեկ հարց կրնա ըլլալ, մինչև որ հաջողած չըլլանք կայսրությունը օսմանցիականացնելու (մյուս ազգերին բնաջնջելու կամ ձուլելու—Ռ. Գ.) մեր գործին մեջ—երկար ու տպառիչ աշխատանք մը, որուն մեջ, սակայն, կը համարձակիմ նախատեսելու, վերջապես պիտի հաջողինք»[6]։ Իսկ բժիշկ Նազիմը այսպես էր հիմնավորում իրենց նպատակը. «Մնում է միակ և վերջին կարելիություն, որի հետ կամա թե ակամա պարտավոր ենք հաշտվել և ընդունել թուրքական շահերին համապատասխանող միակ ելքը՝ բնաջնջել հայերին մեր կայսրության մեջ», «ապացուցելով», որ դա կապահովի Թուրքիայի զարգացումը և զորացումը[7]։

---

6 Հայաստանի Հանրապետության Պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 6։

4 Կիլիկյան կսկիծներ. Վավերագրեր Կիլիկիո կաթողիկոսական դիվանեն, 1903—1915, Բեյրութ, 1927, էջ 100։

5 И. Бутаев, Проблемы Турции, Л., 1925, с. 114.

6 Հուշամատյան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 175։

7 Հ. Ռ. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 213—214։

Երիտթուրքական հեղաշրջմանը հաջորդած խառն ամիսները Շառլ Բաքսթոնը բնութագրել է որպես «ղաղափարների փոթորկուն խմորման» ժամանակաշրջան[8], երբ իշխանության զավթումից հետո երիտթուրքերը ձևափոխում և բացահայտում էին իրենց հայացքները՝ որպես հետադիմական, բուրժուաազգայնական գաղափարախոսություն։ Դեռ 1908 թ. երիտթուրքերը դավանում էին օսմանիզմի գաղափարախոսությանը, որը քարոզում էր օսմանյան բոլոր հպատակների իրավահավասարություն՝ անկախ կրոնական և ազգային պատկանելությունից։ Ինչպես իրավացիորեն նկատել է Ա. Փափազյանը, Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին մեկ, «օսմանյան ազգության» մեջ միաձուլելը «իրականում զրկում էր ոչ թուրք ժողովուրդներին ազգային ինքնորոշման արդարացի իրավունքից»[9]։ Ամերիկացի ուսումնասիրող Ռ. Դեյվիսոնը նշել է, որ օսմանիզմը «1908 թ. հեղափոխության համոզմունքն էր», բայց շուտով «երիտթուրքերի վարչակարգի ներքո այն սկսեց խամրել թուրքիզմի առջև»[10]։ Օսմանիզմն իր դիրքերն աստիճանաբար զիջում էր համաթուրանականությանը, քանի որ «օսմանիզմը՝ կայսրության հանդեպ հավատարմությունն անկախ լեզվից, ազգությունից, կամ կրոնից, որը քարոզում էին հեղափոխականները և որին իմանք հավատում էին, ամենափոքրիկ հնարավորությունն իսկ չի ունեցել դրան հասնելու»[11]։

Հպատակ ժողովուրդներն ըմբռնում էին, որ օսմանիզմը, մեղմ ասած, տանում է դեպի ազգային մշակույթի, բարքերի, կենցաղի վերացում, դեպի ձուլում՝ թուրքերի հետ։ Ուստի, առաջինը մահմեդական ժողովուրդները (արաբները, ալբանացիները) հրաժարվեցին այդ կեղծ դրույթներից և վերստին անդամագրվեցին թուրքական տիրապետության ճիրաններից ազատագրվելուն։ Համոզվելով, որ համախլամության գաղափարախոսությունն անկում է ապրում, քանզի նույնիսկ մահմեդական ժողովուրդներն ազգային անկախությունը գերադասում էին թուրքերի գերիշխանության ներքո համախլամական պետության ստեղծումից, պետություն, որը պետք է սուլթանի տիրակալության ներքո միավորեր բոլոր մահմեդականներին, երիտթուրքերը 1910—1913 թթ., մասնավորապես՝ Բալկանյան պատերազմներում խայտառակ պարտություն կրելուց հետո, քաղաքական գործունեության ասպարեզ տվեցին համաթուրանականությանը, որի հիմքում ընկած էր բոլոր թյուրքալեզու ժողովուրդների միավորումը մեկ ազգի և պետության մեջ՝ թուրքերի գերիշխանությամբ։ XIX դ. վերջին ձևավորվելով որպես թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանություն՝ այն դարձավ երիտթուրքերի արտաքին՝ նվաճողական և ներքին՝ ձուլման քաղաքականության հիմնաքարը։ Համաթուրանականության ռազմատենչ գաղափարախոսությունը դառնում է երիտթուրքերի արտաքին ու ներքին քաղաքականության հիմնական բովանդակությունը և ուղղությունը։ Այս ուսմունքի ձայնափողն էր «Թյուրք յուրդյու» («Թուրքական հայրենիք») ամսագիրը, որը միտում էր գաղափարապես հիմնավորել համաթուրանական պետության ստեղծումը։ Սակայն այդ նպատակին հասնելու համար հարկ էր նախ իրականացնել թուրքիզմի պահանջները, այն է՝ ֆիզիկապես ոչնչացնել կամ միաձուլել ոչ թուրք, առաջին հերթին՝ քրիստոնյա ժողովուրդներին, այդ ճանապարհով

---

[8] Ch. R. Buxton. Turkey in Revolution, London—Leipzic, 1909, p. 110.

[9] Հայերի ցեղասպանությունը ըստ Երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 8։

[10] R. H. Davison, The Modern Nations in Historical Perspective Turkey, New-Jersey, 1968, p. 111.

[11] M. S. Anderson, The Eastern Question 1774—1923. A Study in International Relations, London—New York, 1966, p. 276.

հասնել միատարր պետության ստեղծմանը, ապա՝ ձեռնամուխ լինել համաթուրանականությանը։ Անգլիացի պատմաբան Քր. Ուոքըրը նշում է, որ այդ քաղաքականությունն անհնար էր կիրառել հայերի նկատմամբ, քանզի նրանք ունեին լեզվի և կրոնի դարավոր ավանդույթներ և որոշակի ազգային ինքնուրույնություն[12]։

Վերոհիշյալ գաղափարները երիտթուրքերի համար անմիջապես դարձան ծրագիր և գործողությունների հիմք։ «Համաթուրանականությունը երիտթուրքերի փայփայած քաղաքական երազանքն էր», որի նպատակն էր «Թուրքիայից դուրս, հիմնականում Ռուսաստանի տիրապետության ներքո գտնվող թուրքերի հետ միասնությունը»,— գրել է թուրք կին գրող և հասարակական գործիչ Հալիդե Էդիպը[13]։

Վերստին լայն ծավալ են ստանում տնտեսական, հասարակական, քաղաքական, կրոնական և մշակութային հալածանքներն ու խժդժությունները քրիստոնյաների, մասնավորապես հայերի նկատմամբ։ Դա արտացոլվեց նաև Կիլիկիայում։ Կյանքի, գույքի և պատվի անապահովությունը բազմաթիվ հայերի հարկադրեց լքել հայրենի երկիրը, ոտք դնել պանդխտության ուղին։

Կիլիկիայի 1909 թ. եղեռնագործությունից հետո ավելի քան 5000 հայեր արտագաղթել էին Բեյրութ[14], մոտ 2000 ընտանիք ապաստան էր գտել Կիպրոսում, 1660-ը՝ Եգիպտոսում, բազմաթիվ մարդիկ փրկություն և ապահով կյանք էին որոնում Ամերիկայում[15]։ Հաջորդ տարիներին ևս հարյուրավոր ու հազարավոր հայեր լքում էին հայրենի օջախները։ Արտագաղթը բացասական լուրջ հետևանքներ ուներ. արհեստականորեն պակասում էր հայ բնակչության թիվը, դժվարանում սոցիալական ու ազգային անկախության համար մղվող պայքարը, հարված էր հասցվում ժողովրդի մարտական, դիմադրական ոգուն։ Ամենայն հայոց կաթողիկոսը, մեծ տերություններին հղած նամակում խոսելով երիտթուրքերի հայակործան քաղաքականության ու Կիլիկիայի ջարդերի մասին, ներկայացնում էր նաև օսմանյան Թուրքիայում բնակվող հայերի երիցս ծանր վիճակը, նշելով. «Ու թեև դրանից հետո (Կիլիկիայի 1909 թ. ջարդերից հետո—Ռ. Գ.) վերջին չորս տարին խմբակային մեծ ջարդեր տեղի չեն ունեցած, բայց իմ ժողովուրդն ապրում էր հնարավոր ջարդերի մշտական սարսափի տակ, սիստեմատիկ հալածանքը և մասնավոր ջարդերը շարունակվում են անվերջ...»[16]։ Ուժեղացավ նաև մյուս ժողովուրդների ազգային ճնշումը՝ լինեին քրիստոնյա թե ոչ-թուրք մահմեդական։ Ռուս հետազոտող Ա. Նովիչևի դիպուկ արտահայտությամբ՝ «առաջին հարցում նրանք (երիտթուրքերը—Ռ. Գ.) իրենց դրսևորեցին որպես ամենալկտի շովինիստներ՝ գերազանցելով նույնիսկ Աբդուլ Համիդին»[17]։

Դրությունն օրավուր ավելի տագնապալի էր դառնում։ Ադանայի ռուսական փոխհյուպատոս Վլ. Ցիմմերմանը 1912 թ. սեպտեմբերի 8-ին դեսպան Գիրսին հասցեագրած հաղորդագրության մեջ նշում է, որ «նախկին մութասարիֆի օրոք դրությունն այս նահանգում ավելի քիչ էր երկյուղ ներշնչում, քան այժմ, չնայած այն ժամանակ ևս Հայկական հարցը արտակարգ սրությամբ էր դրված»։ Մեղադրելով երիտթուրքերին, փոխհյուպատոսը դեսպանի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ

---

[12] Cr. J. Walker, Armenia: The Survival of a Nation, London, 1980, p. 190.

[13] H. Edib, Conflict of East and West in Turkey, Lahore, 1935, p. 101.

[14] Գործ, 16. IV. 1909։

[15] Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), Իզմիրլյան կաթողիկոսի արխիվ, թղթ. 14, վավ. 521։

[16] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 105, թ. 36։

[17] А. Д. Новичев, Очерки экономики Турции до мировой войны, М., 1937, с. 38.

«Միություն և առաջադիմություն» կոմիտեն սահմանադրության սկզբունքները կիրառելու փոխարեն «կարողացել է այստեղ ևս, ինչպես նաև մյուս նահանգների մեծ մասում, միայն մեծագույն անիշխանություն տարածել»։ Ապա, շարունակելով խոսքը քրիստոնյաների իրավական դրության մասին, Ցիմմերմանը նկատում է. «Բավական է, որ մարդը քրիստոնյա լինի, որպեսզի նրա գործը տանել տրվի դատարանում և որպեսզի նրան կախաղանի սրժանի համարեն ամեն անգամ, երբ հակառակ կողմը մահմեդական է»։ Իր հաղորդագրությունը նա ավարտում է իթթիհատին մեղադրող հարցով. «Ինչո՞վ բացատրել, որ մահմեդականները վերածվեցին այնքան մոլեռանդների, որ ընդունակ եղան իրականացնել ամենաբարբարոսական գործողությունները, որպիսիք գիտե միայն պատմությունը»։ Դա «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պատճառով էր, որը կարողացավ արթնացնել մահմեդականների «արյունարբու բնազդները»[18]։

«Պրավդան» վկայում էր, որ «հայերին, սլավոնականներին, հույներին և հրեաներին թուրքացնելու երիտթուրքերի ձգտումը ավելի համառ և կոպիտ բնույթ է կրում, քան Աբդուլ Համիդի ժամանակ»[19]։

Նման պայմաններում, անհնար էր դիմանալ ազգային արժանապատվության ստորացմանը և դաժան շահագործմանը, ժողովրդի կեղեքմանն ու նրա վզին փաթաթված անագորույն լծին։ Կիլիկիահայության շրջանում լայն ծավալ են ստանում ազգային-ազատագրական շարժումները։ 1908—1914 թթ. աշխուժանում է նաև հայ ազգային կուսակցությունների գործունեությունը Կիլիկիայում, որի նպատակն օսմանյան տիրապետության դեմ ժողովրդին ազատագրական պայքարի կոչելն էր և թուրքական հալածանքի ու ազգակործան քաղաքականության դեմ միջոցների որոնումը՝ ինքնապաշտպանությունը։ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, օգտագործելով ժամանակավոր և կարծեցյալ ազատությունը, հայ ազգային կուսակցություններն իրենց կազմակերպությունները հիմնեցին Կիլիկիայի տարբեր քաղաքներում։ Այսպես, 1908 թ. գտնվելով Հաճընում, դաշնակցության հիմնադիրներից Սիմոն Զավարյանը ստեղծեց տեղական կազմակերպություն[20]։

Կիլիկիայում մեծ հեղինակություն և ազդեցություն էր ձեռք բերել առցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը։ Դա պատահական չէր, քանզի 1890-ական թվականներից սկսած Կիլիկիայում ինքնապաշտպանական մարտերի կազմակերպումը կապվում է հնչակյանների գործունեության հետ։ Նրանց քաղաքական կշիռը Կիլիկիայում առավել աճեց մասնավորապես Վերակազմյալ հնչակյան կուսակցության ստեղծումից հետո, որի անդամները միտում էին «Ազգայնական ուղղությամբ... նվիրվիլ ինքնապաշտպանության և ազգային ազատագրության գործին»[21]։ Դա, ինչ խոսք, թուրքական բռնակալության դաժան պայմաններում գոյատևման միակ հնարավորությունն էր հայ ժողովրդի համար։ Արդեն 1910—1914 թթ. վերակազմյալ հնչակյաններին հաջողվել էր կուսակցական տեղական կազմակերպությունների լայն ցանց ստեղծել Կիլիկիայում, որտեղ կուսակցության կենտրոնական վարչության ներկայացուցիչն էր Սմբատ Բաջանյանը[22]։ 1908 թ. սկսած լայն գործունեություն էր ծավալել նաև հայ ազատագրական շարժման մեծ նվիրյալ, հաճընցի Համբարձում Բոյաջյանը (Մեծն Մուրատ),

---

18 Геноцид армян в Османской империи. Сборник материалов и документов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, с. 231—232.

19 Правда, 27. VI. 1912.

20 Յ. Պ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմությունը, Լոս-Անջելես, 1942, էջ 493։

21 Գր. Լ. Գալուսայան, Մարաշ կամ Գերմանիկ և հիտոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934, էջ 772։

22 Նույն տեղում, էջ 773։

որը Հաճընի ու Սիսի բնակչության կողմից ընտրվել էր Գոզան սանջակի օսմանյան երեսփոխան[23]։

Հարկ է նշել, որ մինչ սահմանադրության հռչակումը և դրանից որոշ ժամանակ անց հայ քաղաքական կուսակցությունները (բացառությամբ հընչակյանների) բազմիցս հայտարարել էին Երիտթուրքերի և նրանց գաղափարների հետ իրենց համերաշխության մասին, գտնելով, որ անկախության և ազգային ազատագրության համար մղվող պայքարը պետք է դադարեցնել, ժխտել «սահմանադրական Թուրքիո հանդեպ... անջատողական ամեն մի գաղափար»[24], քանզի քրիստոնյաների և մահմեդականների քաղաքական իրավունքների նույնության և իրավահավասարության պայմաններում Օսմանյան կայսրությունում բարենպաստ նախադրյալներ էին ստեղծվել նաև հայ ժողովրդի բարգավաճման համար։ Սակայն ժամանակի ընթացքում համոզվելով իթթիհատի ու թուրքական կառավարության հակահայկական քաղաքականության, ազգային ճնշման ու հալածանքի ուժեղացման մեջ, փոխեցին իրենց վերաբերմունքը երիտթուրքերի նկատմամբ, վերադառնալով պատմականորեն ապացուցված մի՛ակ ճիշտ գործելակերպին, այն է՝ ազատագրական պայքարին։ Այսպես, 1913 թ. օգոստոսին տեղի ունեցած դաշնակցության VII համաժողովը որոշեց վերստին ձեռնամուխ լինել ազատագրական պայքարին, խզել հարաբերությունները երիտթուրքերի հետ, հայ ժողովրդի փրկությունը որոնելով «Եվրոպայի խոստացած իրական երաշխիքների մեջ»[25]։ Նույն, 1913 թ. նոյեմբերին Ռումինիայի Կոնստանցա քաղաքում կայացած հնչակյան Միությունի VII համաժողովն իր որոշումներում ընդգծեց, որ իթթիհատը «մարմնավորում է թուրք հարձակողական նացիոնալիզմը», ուստի պետք է հասնել նրա «թոսլացմանը, քայքայմանը և տապալմանը»՝ այդ նպատակի համար համագործակցելով մյուս ազգերի քաղաքական ուժերի հետ[26]։ Սակայն, փոխանակ հետամուտ լինելու ազգային անկախության և պետականության վերականգնմանը, հնչակյանները, ինչպես նաև գաշնակցականները, կոչվում էին հայկական նահանգների ինքնավարությանը՝ Եվրոպայի վերահսկողությամբ[27]։

Սահմանադրության հռչակումից հետո հայ հայդուկային խմբերը դադարեցրել էին իրենց գործունեությունն ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում։ Սակայն, երբ վերջնականապես ցրվում է պատրանքը և երբ հարստահարումներն ու կեղեքումներն ավելի վայրագ բնույթ են ընդունում, հայ ժողովուրդը կրկին տարերայնորեն դիմում է ինքնապաշտպանության՝ հայդուկային պայքարի ձևով։ Այսպես, 1911 թ. Տիգրան և Համբարձում Կեռվտերելյան եղբայրները, Հակոբ Պըզդրյանը և Ճին Թորոս Տարտաղանյանը «հայրենասիրական զգացումներե մղված» բարձրանում են Կիլիկիո լեռները՝ պայքար մղելով ավարառուների և կողոպտիչների դեմ, հարձակումներ գործելով հայկական գյուղերը թալանելու ելած խուժանի վրա։ 1913 թ. հունվարին, երբ այս փոքրիկ խումբը գտնվում էր Հաճընում, ուստոր մատնությամբ պաշարվում է թուրք ոստիկանական և զինվորական ուժերի կողմից։ Հայ քաջերը երեք օր շարունակ հետ են մղում թուրքերի հարձակումները՝ նրանց պատճառելով զգալի կորուստներ։ Չորրորդ օրը հայդուկները հրդեհում են շենքը, որտեղ ապաստանել էին և, օգտը-

23 Յ. Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 551։

24 Հիսնամյակ—1887—1937—սոց. դեմոկրատ. հնչակյան կուսակցության, Փրովիդենս, 1938, էջ 247։

25 Ա. Ս. Համբարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը ազգամտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990, էջ 355։

26 Հիսնամյակ..., էջ 287։

27 Ա. Ս. Համբարյան, նշվ. աշխ., էջ 361։

վելով իրարանցումից, ծխի քողից ու կրակից, փորձում են ճեղքել թշնամու օղակը, բայց շորսն էլ սպանվում են փոխհրաձգության ժամանակ[28]։

Աշխուժացավ նաև ազգային կուսակցությունների գործունեությունը Կիլիկիա հայդուկային խմբերի առաքման ուղղությամբ։ Պոլսից Ս. Պետերբուրգ ուղղված հաղորդագրության մեջ Թոզքիայում Ռուսաստանի դեսպան Գիրսը նշում էր, որ Եգիպտոսում գտնվող հայ հեղափոխականների մի խումբ մտադիր է անցնել Մերսին և «անկարգություններ» հրահրել այնտեղ, ուստի ինքը դիմել է Կ. Պոլսի հայոց պատրիարքին, որպեսզի վերջինս կանխի դրանք[29]։ Անկասկած է, որ հայերը երբեք էլ չէին ցանկանում «անկարգություններ» հրահրել, այլ հետամտում էին պայքարի միջոցով պաշտպանել հայրենակիցների կյանքը, պատիվն ու կայքը։

1912—1913 թթ. Ադանայի նահանգում կրքերը վերստին բորբոքվել էին։ Դեսպան Գիրսի հաղորդագրության համաձայն՝ օր օրի հասունացող շարժերը կասեցվել էին գերմանական ռազմանավի միջամտության շնորհիվ[30]։ Սա արդեն ոչ այլ ինչ էր, եթե ոչ հայերի ցեղասպանության անմիջական և ատիճանական նախապատրաստում։ Տեղական բնույթի ազգամիջյան հակամարտությունը պայմանավորված էր կառավարության քաղաքականությամբ, որն արդեն 1912—1913 թթ. տկած ուղղակիորեն, բացահայտորեն գնում էր դեպի իր քաղաքական նպատակների իրագործումը։ Երիցս ծանր էր իրադրությունը և Արևմտյան Հայաստանում։ Էրզրումում ռուսական հյուպատոս Ադամովը հայտնում էր, որ «քաղաքում գաղտնի ժողովները շարունակվում են ամենուրեք, բացահայտ տկսել են խոսել հայկական կոտորածների մասին... Ըստ լուրերի՝ շարդի համար ամեն ինչ պատրաստ է և միայն մայրաքաղաքից ազդանշանի են սպասում»[31]։

1912 թ. հոկտեմբերին դաշնակցության ենթակոմիտեների, Ս. Դ. Հնչակյան կուսակցության մասնաճյուղերի և սահմ. ռամկավարական ակումբների ստորագրությամբ Եգիպտոսի հայկական գաղութին համատեղ հայտարարություն է հղվում, որտեղ մանրամասն ներկայացված էր հայ ժողովրդի տառապալի կացությունն Օսմանյան կայսրությունում։ Հայտագրի մի մասը վերաբերում էր Կիլիկիային։ Որ 1910—1914 թթ. հայերի վիճակն օրավուր անտանելի էր դառնում, որ շարունակաբար բռնություններ, հարկադրանքի միջոցներ էին երրառվում հայերի, մասնավորապես՝ կիլիկիահայերի նկատմամբ, պարզորոշ երևում է հենց հայտագրից։ Զբաղվարարվելով Ադանայի շարդերի նման «մասնակի կոտորածներով», երիտթուրք առաջնորդները բորբոքում էին մահմեդական կրոնամոլությունը՝ թշնամանք և ատելություն սերմանելով հայերի հանդեպ։ Հայտագրի հեղինակներն իրավացիորեն նկատում են, որ «թուրք կառավարությունը... ամենախիստ միջոցներով կարծես խաղալ կուզե ժողովուրդին համբերատարությանը հետ և եթե երբեք կառավարական այս միջոցները շարունակեն իրենց սատկությունը կամ ավելի խստանան, թերևս ժողովուրդը իր կյանքի ու գոյության բաղդը պիտի ուզե փորձել իր գենքին ուժովը և այդ պարադային՝ մեր ազգային պաշտպանության քոմիթեն (նկատի ունի Եգիպտոսում ստեղծված ինքնապաշտպանության կոմիտեն—Ռ. Գ.) իր նվիրական պարտքը պիտի սեպե ոչ միայն օժանդակել հարկադրված շարժումի մը մեջ մղված կռիվի մը, այլև առաջնորդել զիրենք իրենց ձերբազատումին գործին հաջողությանը համար»[32]։

---

28 Յ. Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 585։

29 Архив внешней политики России (այսուհետև՝ АВПР), ф. Канцелярия МИД, г. 1913, оп. 470, д. 114, л. 163.

30 Նույն տեղում, թ. 109։

31 Նույն տեղում, թ. 251։

32 Մ. Ճիղմեճյան, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության, 1890—1925, Ֆրեզնո, 1930, էջ 187։

Արյունոտ և դժխեմ ապագան ցույց տվեց, որ դա էր հայության փրկության միակ ելքը։

Սթափ գնահատելով Թուրքիայում տիրող իրավիճակը, հասկանալով դեպքերի զարգացման ընթացքը և, մասամբ էլ, կարծես կանխազգալով մոտեցող դաժան և ահավոր փորձությունը, ինքնապաշտպանության կոմիտեն հիմնավորում էր, որ «Թուրքիո պես վարչական և զինվորական փտություններով շաղախված և թալանի ու ջարդի մոլեռանդ բնազդներով տոգորված պետության մը մեջ» հույժ հրատապ և կարևոր է ինքնապաշտպանության կազմակերպումը, այն համարելով «անհետաձգելի ստիպողականություն» ունեցող գործ, քանզի «Թուրքիո միջավայրը ավելի քան երբեք պաշարված է նորանոր ծանր բարդություններու ներքին և արտաքին վտանգներով և սպառնալիքով, որոնց ամենուն հակահարվածը կրելու դատապարտված է անխուսափելիորեն Հայաստանի և Կիլիկիո հայ բնակչությունը»[33]։ Մարգարեական խոսքեր՝ ծնված սթափ դատողությունից, քաղաքական երևույթների ճիշտ գնահատումից, որոնք ցավոք՝ մնացին օդում կախված, կյանքում լուծում չստանալով։

Կիլիկիայում ազգային-ազատագրական շարժման վերելքը, անտարակույս, կապված էր ոչ միայն Հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա դառնալու, այլև Բալկանյան պատերազմներում Թուրքիայի կրկնակի պարտության և, միջազգային առումով, նրա քաղաքական կշռի ու հեղինակության անկման հետ, որից էլ ցանկանում էին օգտվել կիլիկիահայերը։ Իսկ դա մեծ երկյուղ էր պատճառում Թուրքիային։ Վերջինս տագնապում էր, թե իր ասիական վիլայեթները կկորցնի այնպես, ինչպես եվրոպականը։ Կիլիկիահայության շրջանում բողոքի հուժկու ալիք և ընդվզում առաջացրեց օսմանյան կառավարության կողմից Կիլիկիա գաղթեցվող մոտ 150.000 մահմեդականների հաստատելն իրենց երկրամասում։ Դրանք «հենց նոր լքել էին իրենց օջախները Բալկանյան աղետալի պատերազմի հետևանքով։ Նրանց առաջին քարավանները սկսել էին տեղ հասնել»[34]։ Այս մուհաջիրների՝ գաղթական մահմեդականների, Կիլիկիա գալը նշանակում էր ոչ միայն բազմաշարշար հայ գյուղացու հողի բռնագրավում, այլև խախտվում էր Կիլիկիայի բնակչության ժողովրդագրական պատկերը, երբ խիստ և արհեստականորեն իջնում էր հայ ազգաբնակչության թիվը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով։ Այս հանգամանքն էլ էր հայ որոշ ուժերի ստիպում զենքի դիմել։

Փաստերը վկայում են, որ այնպես չհանդուրժելով Թուրքական արյունոտ տիրապետությունը և դժնդակ շահագործումը, երկյուղելով նոր ջարդերից, ինչպես նաև՝ ոգևորված 1912—1914 թթ. Հայկական հարցի վերաբացմամբ, տոգորված ազատագրական գաղափարներով, Կիլիկիայի հայերը նախապատրաստվում էին հարկ եղած դեպքում դիմելու համընդհանուր ինքնապաշտպանության։ Նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու համար հայերն անհրաժեշտ էին համարում այդ ժամանակ ԱՄՆ-ում գտնվող, Ադանայի հայոց հոգևոր առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի ներկայությունը։ Ինչպես կարծում էր Միհրան Տամատյանը՝ «Երկրին մեջ իր ներկայությունը հրաշագործ ազդեցություն կը գործե, ինք, օրինակի համար, եթե Հաճըն գտնվի Զեյթունի ապստամբության վայրկյանին, շարժումը ամենայն դյուրությամբ այն տեղեն ու ծայր կոտա ու կը ծավալի ամեն կողմ»[35]։ Ուստի, հարկ եղած դեպքում Կիլիկիա անցնելու համար Մուշեղ արքեպիսկոպոսը ԱՄՆ-ից մեկնում է Եգիպտոս։

---

33 Նույն տեղում, էջ 187—188։

34 La Question Arménienne et les Solutions Qu'elle Comporte, Un Projet d'Autonomie Armenienne de la Cilicie, n. p., 1913, p. 16.

35 Մ. Ճիզմեճյան, նշվ. աշխ., էջ 188։

Հայ քաղաքական ուժերը սերտ կապեր են հաստատում Հունաստանի կառավարության հետ։ Վերջինս խոստանում է զենք և զինամթերք տրամադրել հայերին, աջակցել հնարավորության շրջանակներում։ Եվ իրոք, Բալկանյան պատերազմների ժամանակ հունական կառավարությունը պաշտոնապես աջակցում էր արևմտահայությանը (մասնավորապես՝ կիլիկիահայությանը), որին համարում էր իր բնական դաշնակիցը Թուրքիայի դեմ մղվող և մղվելիք պայքարում։ Պետական մակարդակով աջակցությունն առավել շոշափելի դարձավ Վենիզելոս էլեֆտերիոսի վարչապետության տարիներին (1910—1915), երբ հունական կառավարությունը Թուրքական բռնակալության դեմ մղվող պայքարում հետևողականորեն հանդես էր գալիս հույն-հայկական համագործակցության օգտին։ Առանձնապես սերտ հարաբերություններ էին հաստատվել ազատագրական շարժման կիլիկիահայ գործիչների հետ։ Հայտնի է, որ 1913 թ. աշնանը Հունաստանից 3000 միավոր զենք է առաքվել Զեյթուն[36]։

Ինքնապաշտպանություն կազմակերպելու և ղեկավարելու նպատակով Կիլիկիա է անցնում Միհրան Տամատյանը։ Ինչպես նկատել է Մ. Ճիղմեճյանը, «Դժբաղդաբար, նահանգային վարչության հավաստի ստացած տեղեկությունները՝ ղրկված թե՛ Մուշեղ եպիսկոպոսին, և թե՛ տեղվույն Կիլիկիայի հայտնի գործիչներու կողմեն, կը համոզեն, որ Կիլիկիո ժողովուրդը պատրաստ չէ ապստամբության մը բնույթը ունեցող ինքնապաշտպանության և սեղվույն ազգային խշխանությունները համակիր չեն այսպիսի շարժումի մը»[37]։ Կիլիկիահայությունն ապահովված չէր ոչ միայն զենքով և զինամթերքով, որ պարբերաբար բռնագրավվում էին կառավարության կողմից, այլև մեծավ մասամբ բացակայում էր խարտական ոգին, իսկ հայ հասարակական, քաղաքական և հոգևոր որոշ առաջնորդները նման շարժումներն անիմաստ էին համարում, քանզի այն թյուր և սխալ մտայնությունն էր տիրում, որ դա բռնությունների նոր դուռ կբանա։ Մ. Տամատյանը հարկադրված հեռանում է Կիլիկիայից[38]։

1912 թ. ամռանը, օգտագործելով երիտթուրքերի նկատմամբ Թուրքիայի ազգաբնակչության դժգոհությունը, իշխանության գլուխ անցավ «Հուրիեթ վե իթթիֆաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությունը։ Շահագործվող և իրավազուրկ ժողովուրդները հույսեր էին փայփայում, թե վերջապես իրական երաշխիքներ կստեղծվեն ազատության և հավասարության համար, սակայն իթթիֆաֆը իր քաղաքականությամբ շուտով ապացուցեց, որ երիտթուրքերի նման թուրք ազգային բուրժուազիայի և ռազմավատատիրական վերնախավի շահերի և տրամադրությունների արտահայտիչն է, և վարում է դրանց համապատասխան արտաքին և ներքին քաղաքականություն։

1913 թ. հունվարի 10-ին իրականացված հեղաշրջմամբ կրկին իշխանության գլուխ են անցնում երիտթուրքերը։ Նրանց հայտնված քաղաքականության և նոր ջարդերի աճին զուգահեռ ավելի լայն ծավալ էր ստանում Եգիպտոսից, Կիպրոսից, Հունաստանից հայ ֆիդայիների, զինյալ խմբերի մուտքը Կիլիկիա՝ ժողովրդին պաշտպանելու և աղետներից փրկելու նպա-

---

36 Армянский вопрос (энциклопедия), Ереван, 1991, с. 153.

37 Մ. Ճիղմեճյան, նշվ. աշխ., էջ 189։

38 Մ. Տամատյանը (1863—1945) հայ հասարակական-քաղաքական, ազատագրական պայքարի նշանավոր գործիչներից է։ 1890 թ. մասնակցել է Գում-Գարուի ցույցին, ապա, 1891—1893 թթ. Սասունում ապստամբության է նախապատրաստել լեռնականներին, ձերբակալվել է, մեկ տարի անցկացրել բանտում։ Հեռանալով Ս.Դ. Հնչակյան կուսակցությունից, դարձել է Սահմ. ռամկավար կուսակցության հիմնադիրներից և ղեկավարներից մեկը։ 1912 թ. որպես կիլիկիահայության լիազոր ներկայացուցիչ, ընդգրկվել է Պողոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակության կազմում։ Ամիսի ուշ, 1919—1921 թթ., կրկին գործել է Կիլիկիայում։

տակով։ Գիրսը մարտի 17-ի (30-ի) հաղորդագրության մեջ նշում է, որ ևս մեկ խումբ պատրաստվում է Եգիպտոսից Մերսինի վրայով անցնել Կիլիկիա[39]։

Պատահական չէր զինված խմբերի առաքումը Կիլիկիա կամ տեղում կազմակերպումը, քանզի այստեղ նոր շարժերի իրական սպառնալիք էր առաջացել, իսկ այդ մասին Բ. Դաանն ու ներքին գործերի նախարարությունը Կ. Պոլսի հայոց պատրիարքի ուղղած բազմաթիվ դիմումները մնում էին անպատասխան և անհետևանք։ 1913 թ. սկզբներին պայթյունավտանգ իրադրություն էր տիրում Հաճընում, որտեղ ոստիկանությունը, «դասալիքներ» փնտրելու պատրվակով, ներխուժում էր հայերի տները, անարգել կողոպտում ունեցվածքը, ձերբակալում անմեղ մարդկանց։ Նման դեպքերից մեկը հուզեց քաղաքի ողջ հայությանը։ Այլևս չդիմանալով միտումնավոր իրականացվող և ազգային արժանապատվությունը ոտնատակող ստորացումներին, մահակներով զինված հայ կանայք փախուստի են մատնում թուրք ոստիկանների մի խմբի։ Ահիթներ որոնող «կառավարությունը փոխանակ պատժելու իր ոստիկաններին, որոնք հուզումներ են առաջացնում, դրանք որակում է որպես ապստամբություն և կրկնապատկում պատժի միջոցները հայերի նկատմամբ»[40]։ Անկասկած է, որ թուրքերը ցանկանում էին ընդհարումներ հրահրել, նախահարձակ եղող կողմ ներկայացնել հայերին և ձեռնամուխ լինել 1909 թ. «կիսատ թողածի» շարունակությանը։

Ապրիլի 23-ին (մայիսի 6) Գիրսը հաղորդում է, որ Կիլիկիայում հաստատվող և բոպե առ բոպե ժայթքման սպառնալիքով վի կոտորածներն այս անգամ ևս կանխվել են «գերմանական ռազմանավի միջամտության շնորհիվ»[41]։ Մերսինից այցելելով Կիլիկիայի Սահակ կաթողիկոսին, գերմանական ռազմանավի հրամանատարը նրան վստահեցրել էր, որ քանի դեռ գերմանացիները գեթ փոքր ազդեցություն կունենան Թուրքիայի վրա, կբացառվեն այնպիսի զանգվածային շարժերը, ինչպիսիք լինում էին Արդուլ Համիդի կառավարման տարիներին[42]։

Ինչպես տեսնում ենք, երիտթուրքերի ազգայնամոլ ծրագիրը գործողության մեջ էր, իրադրությունը սրվում էր անհայտ հետևանքներով։ Նույնպիսի իրավիճակ էր տիրում նաև Արևմտյան Հայաստանում, որտեղ, ինչպես արդեն նշել ենք, ամեն ինչ պատրաստ էր ջարդերի համար և միտքն մայրաքաղաքից հրամանի էին սպասում։ Եվ այս ամենը դեռ 1913 թվականին...

Կիլիկիայում ստեղծված բարդ կացությունն իր վրա բևեռեց հայ հասարակայնության, ազգային գործիչների տագնապահույզ ուշադրությունը։ Երկյուղելով, որ զինյալ խմբերի՝ ինքնապաշտպանության նպատակով Կիլիկիա հատատվելը կարող է «արդի ճգնաժամային բոպեներուն մեջ» հրահրել «թուրքերուս մոլեռանդ զգացումները» և աշխատելով «ի Կիլիկիա պատահական աղետի մը գրգիռը չընծայել», համաձայն Ամենայն հայոց կաթողիկոսի կարգադրության, Կ. Պոլսի հայոց պատրիարք Վ. Արշարունին պատվիրակներ է ուղարկում Եգիպտոս և Կիլիկիա, որպեսզի «հանդարտեցուցիչ հորդորներուս հետ Ազգային իշխանության կամքը պարտադրելով զգուշացնեն ազգը նոր արհավիրքի մը մատնելեն»[43]։ Սա ևս, անշուշտ, իր ազդեցությունն է ունեցել Մ. Տամատյանի և ազատագրական շարժման այլ դործիչների՝ Կիլիկիայից հեռանալու վրա, որի հետևանքով նոր-նոր սաղմնավորվող ինքնապաշտպանության գործը մահանում է հենց խանձարուրում,

---

39 АВПР, ф. Канцелярия МИД, оп. 470, д. 332, л. 281.

40 La Question..., p. 18.

41 АВПР, ф. Канцелярия МИД, оп. 470, д. 332, л. 251.

42 Германские источники о геноциде армян. Сборник документов и материалов. Под редакцией професеора С. С. Степаняна, т. I, Ереван, 1991, с. 268.

43 Մատենադարան, Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ, g. 32, թղթ. 3, վավ. 100, էջ 1։

Մեծ եղեռնի դեմ ժողովրդին թողնելով անզեն և անպաշտպան։ Սա հարված էր նաև ողջ հայության ազատագրական պայքարին ընդհանրապես։ 1912—1914 թթ., Հայկական հարցի վերաբացման պայմաններում, Կիլիկիահայերը պայքարի միջոցով ցանկանում էին Եվրոպայի ուշադրությունը բևեռել նաև իրենց վրա, որպեսզի հայկական վիլայեթներում նախատեսվող բարեփոխումները տարածվեին հայաբնակ այլ շրջաններում ևս։ Եվ հետո, ինչպես արդեն նշել ենք, խորապես սխալ է և քննադատության չի դիմանում այն տեսակետը, որ թուրք խուժանի ատելությունը չգրգռելու և նրան գործերու թեկուզ պատրվակ չտալու համար հարկ էր դադարեցնել զինված խմբերի առաքումը Կիլիկիա, քանզի ամեն ինչ վաղօրոք մտածված և նախապատրաստված էր թուրք ջարդարարների կողմից։ Իսկ հարդուկային խմբերի ցրումը նշանակում էր ժողովրդից խլել նրա գոյության, ինքնապաշտպանության համամարդկային իրավունքը։ Պատմությունն ապացուցեց, որ ճիշտը ժողովրդի զինումն էր, զինված խմբերի տեղծումը և տարածումը հայաբնակ բոլոր վայրերում, որ ճիշտը համառ ու ամենօրյա գաղտափարական և քաղաքական աշխատանքների միջոցով ժողովրդին պայքարի նախապատրաստելն էր։ Իսկ հայ եկեղեցական իշխանությունների այդօրինակ գործելակերպին հակառակ՝ իրադրությունն օր օրի ավելի սուր և լարված բնույթ էր ընդունում։

Ադանայի թուրքական թերթերը կրոնամոլ և մոլեռանդ մահմեդականներին հայերի նկատմամբ գրգռելու կամպանիա էին սանձազերծել։ 1913 թ. ապրիլի 29-ին մեծ վեզիր Մահմուդ Շևքեթին Կ. Պոլսի հայոց պատրիարքի ներկայացրած դիմումից պարզ է դառնում, որ 1909 թ. Ադանայի կոտորածները հրահրողները նորից են հայտնվել այդ վիլայեթում, հաճախակի հանդիպում են վալիին, բորբոքում են կրքերը։ Միաժամանակ նշվում էր, որ իշխանությունները փութեռանդորեն հայերից բոլոր զենքերը հավաքում են, մինչդեռ նրանց հակառակորդները բացահայտ զինվում են։ Որպես պատասխան՝ մեծ վեզիրը խոստացավ կարգավորել իրադրությունը, բայց, ինչպես միշտ, այս անգամ էլ խոստումներից այն կողմ չանցավ[44]։ Խոսելով Թուրքիայում բնակվող հայերի վիճակի մասին, Նյու Յորքի «Կոչնակ» շաբաթաթերթը նշել է. «Եթե հաշվեցուցակը պատրաստվի այն ամեն դարերուն, ձգձգված բարեկարգությանց, անարդարանալի ոտնձգությանց, անիմաստ տեղումներուն, զմեզ կազմալուծելու համար նրոմթած դավերուն, մեզի դեմ գործված և անպատիժ թողված բյուրավոր ոճիրներուն, որոնց համը ճաշակեցանք վերջին մեկ քանի տարիներուն մեջ՝ այն ատեն պիտի ստիպվինք ըսելու թե Համիտի անկումը և Թուրքիոյ Սահմանադրությունը մեզ արդարև շատ քիչ նպաստավորեցին»[45]։

Պատրիարք Արշարունու հավաստիացմամբ՝ ստեղծված իրավիճակը սպառնում էր հայկական տարրի գոյությանը օսմանյան Թուրքիայում[46]։

Նոր և ահեղ կոտորածների անմիջական վտանգը նկատելի և շոշափելի դարձավ արդեն 1914 թ. բկզբներին, այն էլ այն աստիճան, որ Գիրսը իր կառավարությանը հաղորդում էր. «Ցանկալի կլիներ վճռական միջոցներով խափանել կոտորածը, որը ձեռնտու է միայն մեր հակառակորդներին»[47]։ Այսպիսին էր կիլիկիահայության վիճակը Առաջին համաշխարհային պատերազմի, դաժան փորձությունների, XX դարում իրականացված առաջին ցեղասպանության նախօրեին։

---

[44] Будущее устройство Армении, третья оранжевая книга, Петроград, 1915, с. 20—21.

[45] Կոչնակ, 10. II. 1912։

[46] Будущее устройство Армении, с. 22.

[47] Геноцид армян..., с. 267.

КИЛИКИЙСКИЕ АРМЯНЕ НАКАНУНЕ ГЕНОЦИДА

Р. Г. ГАСПАРЯН

Резюме

Придя к власти и преследуя пантюркистские цели, младотурки продолжили политику притеснения армян. Начался новый этап насилий и бесчинств, этап призыва к очевидной резне армян. Широкий масштаб получают экономические, культурные, социальные, политические и религиозные гонения.

Согласно документам АВПР, уже в 1912—1913 гг. Турция была готова к резне. Отсутствовал только приказ со стороны властей. Все это относилось и к Киликии. В этих условиях среди киликийских армян вновь активизировалось национально-освободительное движение, цель которого —самозащитой противостоять политике истребления. Пример киликийских армян еще и еще раз доказывает, что геноцид армян был заранее запланирован и подготовлен с особой тщательностью со стороны партии младотурок и османского правительства.